



**2007Թ. ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
ՀԵՌԱԽՈՍԱՅԻՆ ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ**



Հեռախոսային հարցումը իրականացվել է Քաունթերփարթ Ինթերնեշնլ-ի Քաղաքացիական շահերի պաշտպանության աջակցության ծրագրի (CASP) և ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID) օժանդակության շնորհիվ: Ծարադրված տեսակետները պատկանում են հեղինակներին և հնարավոր է, որ չհամընկնեն Քաունթերփարթ Ինթերնեշնլ-ի Քաղաքացիական շահերի պաշտպանության աջակցության ծրագրի և ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության տեսակետի հետ:



© Տարածաշրջանային զարգացման կենտրոն/  
Թրանսփարենսի Ինթերնեշնլ - Հայաստան


ՀՀ, Երևան 0010  
Նալբանդյան փ. 5, սեն. 35, 38  
Հեռախոս՝ (374 10) 585 578, 526 914  
Ֆաքս՝ (374 10) 585 578  
Էլ. հասցե՝ [crd@transparency.am](mailto:crd@transparency.am)  
Ինտերնետ կայք՝ [www.transparency.am](http://www.transparency.am)

## ՀԵՌԱԽՈՍԱՅԻՆ ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Հարցումն անցկացվել է ս.թ. մայիսի 16-19-ը 671 երեսանցիների շրջանում: Հարցման համար 20, 30, 40, 50, 60 եւ 70 ավտոմատ հեռախոսակայաններից պատահական ընտրանքով ընտրվել են 20-25-ական հեռախոսահամարներ: Յուրաքանչյուր հաջորդ հեռախոսահամարը նախորդից բաժանված էր 346 համարով՝ սկսած վեցանիշ հեռախոսահամարի վերջին նիշից: 104 հեռախոսահամարի բաժանորդներ (671-ից դուրս) հրաժարվել են պատասխանել հեռախոսահարցմանը: Ստորեւ ներկայացված են հարցման արդյունքները ապուսակների եւ պատկերների ձեռքով եւ վերջում առանձին մեկնաբանությունները՝ տրված հարցվողների կողմից:


**Հարց1. Հավաքե՞լ են, արդյոք, անձնագրեր Ձեզնից կամ ձեր ծանոթներից/բարեկամներից:**

Այո	9.69%
Ոչ	88.97%
Չեմ ցանկանում պատասխանել	1.19%
Դժվարանում եմ պատասխանել	0.15%




Հարց 2. Եթե այո, ապա ո՞ր կուսակցությունը կամ մեծամասնական թեկնածուն:

ՀՀԿ	4.02%
ԲՀԿ	1.19%
ՀՅԴ	0.15%
ՕԵԿ	0.15%
ՀՀԿ+ԲՀԿ	0.60%
ՀՀԿ+ մեծամասնական թեկնածուի	0.15%
ԲՀԿ+ՀՅԴ+Դաշինք	0.15%
ՕԵԿ+ՀՀԿ	0.15%
Դժվարանում եմ պատասխանել	2.53%
Չեմ ցանկանում պատասխանել	0.60%
Missing	90.31%



**Հարց3. Առաջարկե՞լ են, արդյոք, ընտրակաշառք Ձեզ կամ ձեր ծանոթներին/բարեկամներին:**

Այո	11.77%
Ոչ	86.59%
Չեմ ցանկանում պատասխանել	1.64%




**Հարց 4. Եթե այո, ապա ինչպիսի՞ տեսքով:**

Մինչև 5000 դրամ	3.87%
5001-10000 դրամ	2.24%
10001-15000 դրամ	0.89%
15001-20000 դրամ	0.60%
20000-ից ավելի	0.15%
Կենցաղային իրեր	0.15%
Ծառայություններ	1.19%
Այլ	0.45%
Դժվարանում եմ պատասխանել	1.79%
Մինչև 5000 դրամ և կենցաղային իրեր	0.15%
5001-10000 դրամ և մթերք	0.30%
Missing	88.23%


**Հարց 5. Ո՞ւմ կողմից:**

ՀՀԿ	4.47%
ԲՀԿ	0.60%
ՀՅԴ	0.00%
ՄԱԿ	0.30%
Մեծամասնական թեկնածուի	0.15%
Չեմ ցանկանում պատասխանել	2.83%
ՀՀԿ+ԲՀԿ	0.60%
ՀՀԿ+ԲՀԿ+ՄԱԿ	0.30%
ՀՅԴ+ՄԱԿ	0.15%
Դժվարանում եմ պատասխանել	2.38%
Missing	88.23%



Հարց 6. Մաքուր են եղել, արդյո՞ք, անցած ընտրությունները:

Այո	33.53%
Ոչ	39.79%
Դժվարանում եմ պատասխանել	26.68%



## Մեկնաբանություններ

1. Չեմ ուզում նշել կուսակցության անունը, քանի որ ես երիտասարդ տղա ունեմ և չեմ ուզում նրան վտանգի տակ դնել:
2. Կուսակցությունը առաջարկել է \$100 10 մարդու անձնագրային տվյալների համար. կուսակցության անունը չի նշվում:
3. Երիտասարդ պատասխանողը խոստովանում է, որ անձնագրեր են հավաքվել, սակայն ավելի տարիքովը խլում է նրա ձեռքից խոսափողը և պատասխանում, որ ո՛չ անձնագիր են հավաքել, եւ ո՛չ էլ կաշառք են առաջարկել:
4. Կուսակցությունը պահանջել է 20 անձի տվյալներ հավաքել: Կուսակցության անունը չի նշվում:
5. 164 դպրոցի ընտրատարածքում հանձնաժողովի նախագահին ՀՀԿ-ից էր: ՀՀԿ-ն առավոտյան շուտ երթուղայիններով մարդկանց է բերել իրենց ընտրելու համար:
6. Ավանի ընտրատեղամասներից մեկում նկատվել են խախտումներ`
  - ա ) ՀՀԿ-ի ներկայացուցիչների կողմից ընտրատեղամաս են բերվել բազմաթիվ ֆիզիկական թերություններ ունեցող անձինք, իրենց հարևանների և ծանոթների ուղեկցությամբ: Այդ խմբի մեջ նկատվել են պատասխանողին ծանոթ մարդիկ, որոնք դեմքով, ձեռքերով ցույց են տվել, որ ոչինչ անել չեն կարող:
  - բ ) Նախօրոք կաշառված անձինք գալիս էին տեղամաս, նայում ցուցակները, պարզում, թե հարևաններից ովքեր չեն ներկայացել և հետո բերում էին կամ բերել տալիս:
  - գ ) Ընտրողներից շատերը ընտրելուց հետո ցույց էին տալիս մուտքի մոտ կանգնած կուսակցության անդամներին` թե ում են ընտրել, հետո ծալում էին քվեաթերթիկն ու զցում արկղի մեջ (ՀՀԿ):
  - դ ) Նկատվել են բջջային հեռախոսով նկարելու բազմաթիվ դեպքեր:
7. Ընտրողներից մեկը համարում է, որ մեր երկիրն այնպիսի երկիր է, որ յուրաքանչյուր բոլե կարող են մարդուն իր տան մեջ սպանեն:
8. Մյուսն էլ համարում է, որ ընտրություններից հետո անիմաստ է նման հարցումներ անցկացնելը:
9. Շատերն էլ համարում են, որ այս ընտրությունը բեմականացում է: Ամեն ինչ նախօրոք որոշված էր:
10. Կենտրոնի թաղապետ Գագիկ Բեգլարյանը փոխհատուցել է բնակիչների գույքահարկը:
11. ՀՀԿ-ն սպառնալիքներով է ձայներ կորզել, Տաշիր առևտրի կենտրոնում անձնագրեր է հավաքել, իսկ ՄԱԿ-ը \$800 է առաջարկել շենքին: